# Ըը

ընկեր ընտիր
ընկերասեր ընտրել

ընկերասեր

ը ն կ ու • •



## Ընկերները

Նարեկը Անիի ու Աշո-տի ընկերն է:

Մի օր ...

*Պատմի՛ր.*

– Նարե՛կ, էլի՛ նե-տիր,– ասում էր Աշոտը:

Իսկ Նարինեն ու Անին ուտում էին ու ասում.

– Շա՜տ ընտիր է:

,–

*Ըը*







պսակ

*պը-սակ*

մկնիկ

*մըկ-նիկ*

սանր

*սա-նըր*

## Մարիի տոնը

Կիրակի օրը լրանում է Մարիի ինը տարին: Տոնական  ը պատրաստ է:

Մարին շարում է տասը կարմիր մոմ:

Աշոտը շուշան է տալիս Մարիին, Անին ու Արան՝ մի նըկար, իսկ Սոնան՝ տիկնիկ:

Շեկոն, Տոտոն ու Պեպենը...



*մոմ*

*շիշ*

# Հ հ

համ
հում

հատիկ
հատակ

պահապան
պահարան

հասմիկ



## Հասմիկի շնիկը

Հասմիկը լալիս է. պուրակում կորել է իր սիրելի շնիկը:

Նա տան պահապանն էր: Շնիկը շատ էր սիրում Հասմիկին: Հասմիկը ամեն օր կերակրում ու սանրում էր նրան:

Հիմա ո՞ւր է կորել շնիկը ...

*Ընտրի՛ր ու շարունակի՛ր.*

*հ հ*

1



2





հասկ հասնել սահել
հասակ հասուն սահնակ

*Հրանտ*
*Միհրան*
*Հերմինե*



## Հասկը

Հասկը արտում
Հասել է,
Հրանուշը
Տեսել է:
Տուն է հասել
Ու ասել.
– Հասմի՛կ, Հուրի՛կ,
Հասկն հասել է
Հուշիկ-հուշիկ,
Պսակ կապել
Հատիկ-հատիկ:

Մհեր հսկա

հա: մեմ, սուն, սակ, նել, լել, րել, րուստ

# յ Յ

յ ո •



Հ ա յ ա ս տ ա ն

հայր հայ
մայր հայերեն

Հայկ Արամ

Հայկարամ

Արա Մայիս

Արամայիս



## Հայկական անուններ

Հայրիկիս անունը Հրայր է, մայրիկիս անունը՝ Արուսյակ: Իսկ իմ անունը Հայկ է՝ Հայկ Նահապետի անունը:

Հայկուհի տատիկս ասում է.

– Հայը հայկական անուն պիտի ունենա:



հայ
հայկ > ուհի

մատյան սարյակ
պատյան սենյակ




## Հայաստանը մեր տունն է

Հայկը հայ է: Նա շատ է սիրում Հայաստանը, հայերենը, Մասիս սարը:

Հայկուհին տատիկը Հայկին պատմում է Հայկ Նահապետի ու մեր հերոս պապերի մասին:

Հայաստանը մեր տունն է:

# զ Զ

զ ա ն •

| | | |
|---|---|---|
| հազ | մարզիկ | Զարեհ |
| հազալ | մարզել | Զարուհի |



## Կրկեսում

Զարեհը Զորիի հայրիկն է: Նա կրկեսում մարզում է շուն, կատու, կապիկ…

Կատուն շնիկի հետ տանում է նապաստակի սայլակը: Կապիկը պարում է: Իսկ ը օրոր-շորոր պտույտներ է անում:

Զորին սիրում է կըրկեսը:

մազ - մաս
զուր - սուր

*զ Զ*

# Վվ

լավ Վահե ավան
վատ Վահրամ Լուսավան



հ ա վ



## Վրանի մոտ

Վահրամը մատներով պատկերներ էր ստանում վրանի պատին:

– Ահա՛ հավիկ,– ասում է նա,– ահա՛ կատու, ահա՛ շնիկ:

– Վա՛յ, նապաստակ էլ կա, նայի՛ր,– ասում է Վահեն:

Իսկապես, վրանի մոտ մի սիրունիկ նապաստակ էր նստել:



հավ, նավ → եր

կատու, վրան → ներ

# Ռ ռ

զկեռ
զկեռենի

կեռաս
կեռասենի

նուռ
նռնենի

լուր - լուռ
կրունկ - կռունկ

ա ն տ ա ռ



## Սկյուռիկն ու մկնիկը

Սկյուռիկն ու մկնիկը ընկերներ էին: Սկյուռիկը ընկույզները մեկիկ-մեկիկ նետում էր մկնիկին. հետո միասին պիտի ուտեին:

Սակայն շատակեր մկնիկը մենակ կերավ համով ընկույզները:

Կերա՜վ, կերա՜վ ու....

ռ Ռ

ընկերասեր սկյուռիկ
մկնիկ

# ղ Ղ

| | | | |
|---|---|---|---|
| աղ | հող | կաղին | Ղուկաս |
| մաղ | շող | կաղնի | Ղազար |



մ ե ղ ու

սարի մեղր
մեղվապահ պապիկ



## Մեղվապահ պապիկը

Աղասի պապիկը մեղվապահ է: Նա ամռանը մեղուները սար է տանում:

– Ղուկա՛ս, մե՛ղր կեր, – ասում է Արան, – սարի մեղրը շա՜տ համեղ է լինում:

– Իսկապես համեղ է. սարի  ների համ ու հոտ ունի այս մեղրը:




մ, պ, վ → աղ

ա → ղի, ղալ, ղեղ

# Խ խ

խ ո զ

խիտ　　մեխ　　սոխ
խոտ　　մեխակ　　սոխակ



խոզանակ
խոզապահ



## Խռախռա խոզուկը

Խռախռա խոզուկը շատ ուրախ էր. Ճեկլիկ նապաստակը նրան հրավիրել էր խմորեղեն ուտելու:



Խոզուկը շտապում էր նապաստակին հյուր:

– Խմորեղե՛ն, համո՜վ խմորեղեն, – ուրախ խռխռում էր խոզուկը:

Նա վազելով ներս մտավ ու ...

*Շարունակի՛ր.*

խաղող

*խ խ*

աղ - ա՛խ
օղ - օ՛խ
վաղ - վախ

խաղող
խաղաղ
խաղալ

վախ
վախկոտ
անվախ

*յուղ*
*յուղալի*
*յուղաներկ*

*աստղ*
*աստղիկ*
*Աստղիկ*

1





2

| | |
|---|---|
| աղ | ղալ |
| կա | ղող |
| տախ | տակ |
| խա | ղին |
| | մուկ |
| | խել |

## Հանելուկներ

Մարտին, ապրիլին
Լալի՜ս է, լալի՜ս,
Աշնանը անուշ
Հատիկներ տալիս:

Հեզի՜կ - նազի՜կ,
Անո՜ւշ լեզվիկ,
Հավ է տեսնում,
Հալվում, մաշվում:

# ց Ց

ց ո ր ե ն

գող — Ցոլիկ — ակնոց

ցուլ — Ցոլակ — մատնոց

Պարզի՛ր.



ցորենի — արտ, հասկ, հատիկ

## Ցորենի արտում

Արտում հասել էր ցորենը: Ցորենի հատիկները խիտ-խիտ շարվել էին հասկերի վրա:

Ցոլակ պապիկը, Անին ու Արան արտում էին:

_ Ցորենը հասե՜լ է, պապի՛կ, _ ասաց Արան:

_ Այո՛, հացը առատ կլինի այս տարի, _ շարունակեց Ցոլակ պապը:

ց Ց

# Ժ ժ

ժա մա ցույց

ժիր
Ժիրայր

ժամ
ժամանակ
ժամացույց

## Ժլատ ընկերը

Ժիրայրն ու Վրեժը մտերիմ ընկերներ էին: Վրեժը նույնիսկ մեկ իրիսը կիսում էր Ժիրայրի հետ:

Իսկ Ժիրա՞յրը...

Մի օր նա Վրեժի մոտ 2 ընկույզ մենակ կերավ:

_ Ժիրա՛յր, _ նեղացավ Վրեժը, _ կեսը տայի՜ր, էլի՜...

_ 2 հատ էր, ա՛յ Վրեժ, 1 հատ լիներ, սիրով կկիսեի, _ զարմացավ Ժիրայրը:



ուժ _ ուշ
անուժ _ անուշ

Ժ ժ



## Պատմի՛ր.





# Եե

ե = (յ + է)



ե լ ա կ

ե զ
ե ս

հ ե զ
կ ե ս

## Կաղնին ու ելակը

Անտառի հսկա կաղնին մի օր ասաց ելակին.

_ Պստիկ ես, ելա՛կ, շա՛տ պստիկ: Իսկ ես հսկա եմ, ուժեղ ու ամուր: Ես իմ կաղիններով կերակրում եմ խոզերին:

_ Այո՛, պստիկ եմ,_ պատասխանեց ելակը,_ սակայն իմ անուշ պտուղներով ես ուրախացնում եմ երեխաներին:



պստիկ — եմ / ես / է

երկար
երկիր

երազ
Երազիկ

Եղիշե
Երանուհի

ե Ե

երեկո		երես		երկու
եղյամ		ժպտերես		տասներկու

ցուրտ < երեկո / եղանակ




## Եղյամը

Աշուն է:

Վաղ առավոտյան Երանուհին ու Եղիշեն մտնում են պարտեզ: Խոտերի վրա եղյամ էր նստել: Երեխաները հիանում են:

_ Եղյամը երկա՞ր կմնա խոտերի վրա, _ հարցնում է Եղիշեն:

_ ի շողերից շուտով կըհալվի, _ ասում է Երանուհին:

**Հանելուկ**

Վաղ առավոտյան
Նստում է հողին,
Ժպիտն է խառնում
ի շողին:

# ո Ո

ո = (վ + օ)



● ● զ ն ի

ո զ ն ի

● ● ●

ո ղ
ո ր

● ● ●

շ ո ղ
լ ո ր

ոսկի
ոսկոր

Ոսկան
Ոսկեհատ

մայր > ոզնի
[ ] > ոզնի



## Ոզնին

Մի օր Ոսկանն ու Ոսկեհատը պապիկի հետ աշխատում էին այ•ում: Ոսկանը խաղողի վազի տակ ոզնի տեսավ. խաղող էր ուտում:

_ Տղա՛ս, _ ասաց պապիկը, _ մի՛ վախեցնի ոզնուն. ոզնին սիրում է խաղող ուտել, սակայն այ•ին պահպանում է  երից ու մկներից:

ո Ո



որս
որսկան

որոշ
անորոշ

խաղողի < վազ, ողկույզ



## Ոսկեվազում

Ոսկեվազը հայտնի է իր անուշահամ խաղողով:

Ոսկանն ու Ոսկեհատը պապիկի հետ խնամում են խաղողի վազերը: Իսկ աշնանը խաղողի ողկույզները շողշողում ու ժպտում են նրանց:

Տատիկը ողկույզները կախում է սառը մառանում:

խ, ն, լ, շ, հ → որ

հ, խ, մ → ոտ

ով

**Շուտասելուկ**

Ոսկանն եմ ես, Ոսկանը.
Ոտով հասա որսասար,
Որսասարում որս արի՝
Որսկան պապիս հավասար:

